

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի՝

- 1-ին մասում «համար» բառից հետո լրացնել «բացառությամբ տիեզերական գործունեությանը և մարտական զենքի արտադրությանն առնչվող տեղեկությունների, որոնց կարգավորումն իրականացվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:» բառերը:
2. 4-րդ մասում «պատճենները» բառից հետո լրացնել «, բացառությամբ տիեզերական գործունեության և մարտական զենքի արտադրությանն առնչվող տեղեկությունների, որոնց կարգավորումն իրականացվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի պահանջներին համապատասխան» բառերը:
3. 4-րդ մասի երկրորդ պարբերությունում «պատճենները» բառից հետո լրացնել «բացառությամբ տիեզերական գործունեության և մարտական զենքի արտադրության օրինական ուժի մեջ մտած վճիռների պատճենների,» բառերը, իսկ երրորդ պարբերությունում «վճիռները» բառից հետո լրացնել «բացառությամբ տիեզերական գործունեության և մարտական զենքի արտադրության մասին որոշումների վճիռների,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքից բխող համապատասխան իրավական ակտերում փոփոխությունները և լրացումները կատարվելու են օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: